ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» նոյեմբերի 2013թ N __ Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ԵՐՎԱՆԴ ՏԵՐ–ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31–ի «Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2–րդ կետը՝

Երևանի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Երևան քաղաքի նշանավոր կառուցապատող և բարերար Երվանդ Տեր–Ավետիքյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը (կիսանդրին) Երևան քաղաքի Մհեր Մկրտչյան փողոցում (Երևան կինոթատրոնի մոտ գտնվող սյունաշար սև շենքի հարակից տարածքում) տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ –ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ԵՐՎԱՆԴ ՏԵՐ–ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀԱԺ–ից Երևանի քաղաքապետին ուղղված՝ Երևան քաղաքի նշանավոր կառուցապատող և բարերար Երվանդ Տեր–Ավետիքյանի ծոռան՝ Զաքար Տեր–Ավետիքյանի դիմումը, որում նա հանդես է գալիս Երևան քաղաքի կառուցման և զարգացման գործում նշանակալի ավանդ և զգալի ներդրում ունենալու համար Երվանդ Տեր–Ավետիքյանի կիսանդրին Երևանում տեղադրելու խնդրանք–առաջարկով:

<u>Երվանդ Տեր–Ավետիքյանի կողմից իրականացված՝ հիմնական կառույցների ցանկը</u>.

- ***Փոքր համերգասրահի շենքը (նախկին Կուլտուրայի տունը) Աբովյան փողոցում, որն կառուցվել է բացառապես Տեր–Ավետիքյանի ֆինանսական միջոցներով, ներառյալ՝ Իտալիայում պատվիրված ջահը: Այս կառույցի պարագայում հայ մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցը հանդես է եկել որպես պատվիրատու,***
- ***Նախկին պետ.համալսարանի շենքը Աբովյան փողոցում,***
- ***1–ին հիվանդանոցի շենքը Աբովյան փողոցում,***
- ***Նախկին ֆինանսների նախարարության շենքը Նալբանդյան փողոցում,***
- ***«Երևան» կ/թ մոտ գտնվող սյունաշար սև շենքը, որի բակում գտնվում էր Երվանդ Տեր– Ավետիքյանի կողմից հիմնած Մեխանիկական գործարանը,***
- ***Ռուսական տաճարը Շահումյան հրապարակում,***
- ***Քաղաքի 1–ին փոքրիկ հիդրակայանը,***
- ***Թուրքիան Հայաստանին միացնող՝ նշանավոր Մարգարայի կամուրջը,***
- ***Երևան–Ջուլֆա երկաթուղագծի բոլոր կամուրջները,***
- ***Նորքի Սբ.Մարիամ Աստվածածին ավերված եկեղեցու վերականգնումը:***

Կիսանդրու հեղինակներն են ՀՀ ժողովրդական նկարիչ–քանդակագործ Խաչատուր Իսքանդարյանը և ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ասլան Մխիթարյանը:

Նախագիծ–առաջարկը քննարկվել էր Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովի՝ ս.թ. հունիսի 13–ին կայացած նիստում և միաձայն հավանության էր արժանացել հանձնաժողովի կողմից, որից հետո հանձնաժողովի անունից գեղարվեստի հանձնաժողովի նախագահ Լ.Իգիթյանը գրավոր զեկուցագիր էր ներկայացրել Երևանի քաղաքապետին՝ մեծ բարերարի և նշանավոր կառուցապատողի կիսանդրին Երևանում տեղադրելու վերաբերյալ և դրական է գնահատանքի է արժանացել Երևանի քաղաքապետի կողմից (զեկուցագիրը կցվում է):

Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովն և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետն առաջարկում են Երվանդ Տեր–Ավետիքյանի կիսանդրին տեղադրել Մհեր Մկրտչյան փողոցում՝ «Երևան» կ/թ մոտ գտնվող՝ նրա կողմից իրականացված կառույցներից մեկի՝ սյունաշար սև շենքի հարևանությամբ, որի բակում գտնվում էր Երվանդ Տեր–

Ավետիքյանի կողմից հիմնած Մեխանիկական գործարանը (լուսանկարները կցվում են)։

Համաձայն հուշարձանի հեղինակների կողմից ներկայացված նախահաշվի, քանդակի մոտավոր արժեքը կկազմի ~ 8000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ԵՐՎԱՆԴ ՏԵՐ–ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երեվան քաղաքի նշանավոր կառուցապատող եվ բարերար Երվանդ Տեր–Ավետիքյանի կիսանդրին երևանում տեղադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտության չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ԵՐՎԱՆԴ ՏԵՐ–ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երեվան քաղաքի նշանավոր կառուցապատող եվ բարերար Երվանդ Տեր–Ավետիքյանի կիսանդրին երևանում տեղադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվում են փոփոխություններ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ